ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի փորձագետ Լուիզա Սամվելի Արշակյանի 2026թ. ապրիլի 3-ից մինչև սույն թվականի նոյեմբերի 18-ը իրականացած աշխատանքների վերաբերյալ:

Ես՝ Լուիզա Սամվելի Արշակյանս, 2026թ. ապրիլի 3-ից մինչև սույն թվականի նոյեմբերի 18-ը աշխատելով ՀՀ ՔԿԱԳ գործակալության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

- Քաղաքացիների ընդունելություն, դիմումների ընդունման, դիմումների ուսումնասիրության, փաստաթղթերի տրամադրման գործընթացի կազմակերպում դիմումների կատարման համար համապատասխան ընթացքի ապահովում,
- Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերականգնում, ուղղումների և փոփոխությունների դիմումների ընդունում, ուսումնասիրություն, հաստատման և տրամադրման գործընթացի կազմակերպման հետ կապված գործառույթների իրականացնում,
- ԱՊՀ երկրների իրավասու մարմիններից ստացված հարցումների ու փաստաթղթերի փոխանցում ըստ հասցեատերերի,
- Մասնակցություն ՔԿԱԳ արխիվի վարման, պահպանության, թվայնացման և տեղեկատվության տրամադրման աշխատանքներին,
- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված լրացուցիչ ծառայությունների դիմաց գանձվող վճարների ընդունում,
- Քաղաքացիների կողմից հեռախոսազանգերի միջոցով հնչեցված հարցերի պատասխանների տրամադրում, նրանց իրավունքների և պարտականությունների օրենքով սահմանված դրույթների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:

Հարգանքով՝ Լուիզա Արշակյան

18.11.2026